Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 03

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Գավառ **20.10.2023թ. ժամը 12.00**

Նիստը նախագահում էր ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, մասնակցում էին ՀՀ Գեղարքունիքի մարզի խորհրդի 8 անդամներից 7-ը:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի հրավերով մասնակցում էին ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Սևակ Խլղաթյանը, մարզպետի խորհրդական Ալբերտ Աղեկյանը, մարզպետի օգնական Ջանիկ Բազեյանը, մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները և «Գեղամա աշխարհ» մարզային թերթի գլխավոր խմբագիր Խոսրով Խլղաթյանը:

Օրակարգում՝

1. 2023 թվականի հոկտեմբերի 15-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին:

   /Զեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ/

2. ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներում 2023 թվականի գյուղատնտեսական աշխատանքների մասին:

   /Զեկ. Մարտին Պետրոսյան - մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ/

3. **Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից բռնի տեղահանված և ՀՀ Գեղարքունիքի մարզի բնակավայրերում ապաստանած ընտանիքներում** մանկավարժների, դաստիարակների, **դպրոցահասակ և նախադպրոցական տարիքի երեխաների և նրանց մարզի հանրակրթական և նախադպրոցական կրթական հաստատություններում տեղավորման և հաճախումների գործընթացի մասին**:

   /Զեկ. Կարեն Զազյան - մարզպետի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության պետ/

4. ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներում իրականացվող սուբվենցիոն ծրագրերի ընթացքի և 2023 թվականի ավարտի կանխատեսումների մասին:

/Զեկ. Սասուն Սահակյան - մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ

5. Այլ հարցեր:

Հայտարարությամբ հանդես եկավ՝

Վանիկ Հարությունյան - Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը:

1. Առաջարկվեց Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝

1) աշխատանքներ տանել 2023 թվականի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշները ըստ համամասնությունների տարվա կտրվածքով ապահովելու համար և համագործակցել մարզի պետական և համայնքային կառույցների հետ՝ իրենց աշխատակիցների կողմից համայնքային բյուջեի նկատմամբ պարտավորությունների կատարումն ապահովելու համար.

2) շարունակական վերահսկողություն իրականացնել մարզի տարածքում հանքարդյունաբերության և շինարարության ոլորտներում աշխատանքներ իրականացնող տնտեսվարող սուբյեկտների գործունեության օրինականությանը և ապահովել նրանց կողմից համայնքային բյուջեի վճարումների ամբողջական կատարումը.

3) շարունակել ամենօրյա աշխատանքները Լեռնային Ղարաբաղի հանրապետությունից բռնի տեղահանված քաղաքացիների հաշվառման, նրանց կեցության վայրով, սննդով և առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովելու համար: Աջակցել նրանց նախադպրոցական տարիքի երեխաներին համայնքի մանկապարտեզներում տեղավորման աշխատանքներին.

4) աջակցել 2023 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերն ավարտին հասցնելու աշխատանքներին՝ մասնավորապես 2023 թվականի ընթացքում ՀՀ

կառավարության տարբեր որոշումներով հատկացված պետական բյուջեի մասնաբաժինների վճարումները մինչև տարեվերջ իրականացնելու համար:

X

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ